Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏՈՎ ՈՒՂԵՎՈՐՆԵՐԻ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐ ԸՆՏՐԵԼՈՒ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Եղեգնաձորի համայնքապետարանը հայտարարում է Եղեգնաձոր համայնքի ներհամայնքային ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր ընտրելու մրցույթ՝ հետևյալ թափուր ավտոբուսային (միկրոավտոբուսային) երթուղիների համար՝

NN ր/կ	ԵՐԹՈՒՂԻ				
	Անվանումը և համարը	Սկզբնակետը	Վերջնակետը	Տեսակը (ավտոբուսային / միկրոավտոբուսային)	Սպասարկման համար պահանջվող հիմնական և պահուստային ավտոբուսների քանակը
1.	Թիվ 1	ք. Եղեգնաձոր, ավտոկայան Նարեկացու փողոց 8 հրապարակ	գ. Գետափ	Միկրոավտոբուսային, նվազագույնը 15 նստատեղ	6 հատ, որից 2 հատը հաշմանդամների տեղափոխման համար հարմարեցված, 1 հատ պահուստային
2.	Թիվ 2	ք. Եղեգնաձոր, ավտոկայան Նարեկացու փողոց 8 հրապարակ	գ. Գլաձոր		
3.	Թիվ 3	ք. Եղեգնաձոր, ավտոկայան Նարեկացու փողոց 8 հրապարակ	գ. Մալիշկա		
4.	Թիվ 4	ք. Եղեգնաձոր, ավտոկայան Նարեկացու փողոց 8 հրապարակ	գ. Վերնաշեն		

ՉՎԱՑՈՒՑԱԿ

Հ/Հ	Մեկնումը սկզբակետից	Ժամանումը վերջնակետ	Մեկնումը վերջնակետից	Ժամանումը սկզբակետ
1	ք. Եղեգնաձոր	գ. Գետափ	գ. Գետափ	ք. Եղեգնաձոր
	08:30	08:40	08:45	08:55
	13:00	13:10	13:15	13:25
	16:00	16:10	16:15	16:25
	18:05	18:15	18:20	18:30
2	ք. Եղեգնաձոր	գ. Գլաձոր	գ. Գլաձոր	ք. Եղեգնաձոր
	08:30	08:40	08:45	08:55
	13:00	13:10	13:15	13:25
	16:00	16:10	16:15	16:25
	18:05	18:15	18:20	18:30
3	ք. Եղեգնաձոր	գ. Մալիշկա	գ. Մալիշկա	ք. Եղեգնաձոր
	08:30	08:40	08:45	08:55
	13:00	13:10	13:15	13:25
	16:00	16:10	16:15	16:25
	18:05	18:15	18:20	18:30

	ք. Եղեգնաձոր	գ. Վերնաշեն	գ. Վերնաշեն	ք. Եղեգնաձոր
	08:30	08:40	08:45	08:55
	13:00	13:10	13:15	13:25
	16:00	16:10	16:15	16:25
	18:05	18:15	18:20	18:30

ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿԸ

1. Հայտ՝ N 2 ձևի:

2.* Ավտոբուսների գրանցման վկայագրեր (ժամանակավոր կտրոն):

3.*Ավտոբուսի նկատմամբ սեփականության կամ օգտագործման իրավունքի առկայությունը հավաստող փաստաթուղթ:

4.*Ավտոբուսն այլ տեսակի վառելիքով շահագործելու համար վերասարքավորելու (կահավորելու) դեպքում՝ շահագործման և վերասարքավորման օրինականությունը հաստատող փաստաթուղթ:

5. Հավաքակայանի սեփականության կամ օգտագործման իրավունքը հավաստող փաստաթղթեր, գիշերակացով երթուղիների դեպքում վերջնակետում ավտոբուսների կայանումը, պահպանումը, նախաուղերթային տեխնիկական զննումը և վարորդների բուժզննումն ապահովելու նպատակով կնքված պայմանագրեր:

6. Ավտոկայարանային ծառայություն մատուցող կազմակերպության հետ կնքված սպասարկման նախնական, իսկ ներհամայնքային փոխադրումների դեպքում ենթակարգավարական ծառայություններ մատուցող կազմակերպության հետ կնքված ծառայություններ մատուցելու նախնական պայմանագիր (գործող պայմանագրի առկայության դեպքում նախնական պայմանագիր չի պահանջվում):

7. Փակ ծրարով ներկայացնում է երթուղու սպասարկման համար առաջարկվող մեկ ուղևոր փոխադրավարձը:

Նշված փաստաթղթերի պատճենները ներկայացվում են մեկ օրինակից, կազմակերպության կողմից սոսնձված և ստորագրված փաթեթով:

Հայտերն ընդունվում են 2026 թվականի սեպտեմբերի 8-ից յուրաքանչյուր աշխատանքային օր, ժամը 9:00-ից 18:00-ն, ք. Եղեգնաձոր, Շահումյան փողոց 1 հասցեում (Եղեգնաձորի համայնքապետարան):

Հայտերի ընդունումը դադարեցվում է 2026 թվականի հոկտեմբերի 16-ին, ժամը 18:00-ին:

Մրցույթի անցկացման օրը, ժամը և վայրը՝ 2026 թվականի հոկտեմբերի 23-ին, ժամը 11:00, ք. Եղեգնաձոր, Շահումյան փողոց 1 (Եղեգնաձորի համայնքապետարան):

Երթուղիների չվացուցակներին կարող եք ծանոթանալ www.yeghegnadzor.am կայքում:

Լրացուցիչ տեղեկություն ստանալու համար զանգահարել /0281/ 2-20-20 հեռախոսահամարով, էլ. փոստ՝ yeghegadzor@gail.com:

*Չի ներկայացվում հայտ-պարտավորագիր ներկայացնելու դեպքում:

Մրցույթն անցկացվում է «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» օրենքի և Կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 03-ի թիվ 1994-Ն որոշման պահանջների համաձայն: